

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ  
ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## **Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը**

**և**

## **Հայաստանի Հանրապետությունը,**

ցանկանալով էլ ավելի զարգացնել իրենց տնտեսական հարաբերությունները, բարելավել հարկային հարցերով իրենց համագործակցությունը և ապահովել հարկերի արդյունավետ ու պատշաճ հավաքումը,

մտադրվելով տեղաբաշխել իրենց համապատասխան հարկման իրավունքները, որպեսզի հնարավոր լինի բացառել կրկնակի հարկումը, ինչպես նաև հնարավոր լինի խուսափել չհարկելուց,

համաձայնեցին հետևյալի մասին.

### **Հոդված 1 ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ անձանց նկատմամբ:

### **Հոդված 2 ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐ**

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետության, դրա երկրամասերից որևէ մեկի կամ դրա քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների անունից գանձվող եկամտի և գույքի հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտից և գույքից գանձվող հարկեր են համարվում համախառն եկամտի, համախառն գույքի, եկամտի կամ գույքի տարրերի նկատմամբ կիրառվող բոլոր հարկերը, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտների հարկերը, ձեռնարկությունների կողմից վճարվող աշխատավարձերի և այլ վճարումների ամբողջ գումարների հարկերը, ինչպես նաև գույքի հավելածի գումարների հարկերը:

3. Գոյություն ունեցող հարկերը, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Համաձայնագիրը, մասնավորապես հետևյալն են.

ա) Հայաստանում՝

- i) շահութահարկ,
- ii) եկամտահարկ,
- iii) գույքահարկ,
- (այսուհետ՝ Հայկական հարկ)։

բ) Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում՝

- i) եկամտահարկ (Einkommensteuer),
  - ii) շահութահարկ (Körperschaftsteuer),
  - iii) առևտրի հարկ (Gewerbsteuer) և
  - iv) կապիտալի հարկ (Vermögensteuer)՝
- այդ թվում՝ դրանցից գանձվող հավելավճարները  
(այսուհետ՝ Գերմանական հարկ)։

4. Սույն Համաձայնագիրը կկիրառվի նաև բոլոր նույնատեսակ կամ էապես համանման այն հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ի լրումն գործող հարկերի, կամ՝ դրանց փոխարեն։ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները միմյանց կձանուցեն իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված յուրաքանչյուր էական փոփոխության մասին։

### **Հոդված 3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

1. Սույն Համաձայնագրի նպատակներով, եթե համատեքստն այլ բան չի պահանջում.

ա) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, համատեքստից կախված, նշանակում են Հայաստանի Հանրապետություն կամ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և, երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է տարածք՝ ներառյալ ցամաքը, ջրերը, ընդերքը և օդային տարածքը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն իրացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավագործությունը՝ համաձայն ազգային օրենսդրության և միջազգային իրավունքի,

գ) «Գերմանիայի Դաշնային Հանրապետություն» տերմինը նշանակում է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն և, երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության տարածք՝ ներառյալ ծովի հատակը, դրա ընդերքը և տարածքային ջրերի արտաքին սահմանին հարակից ջրերը, որի նկատմամբ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունն իրացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավագործությունը՝ միջազգային իրավունքին և ազգային օրենսդրությանը համապատասխան, կենդանի և ոչ կենդանի բնական ռեսուրսների հետազոտման, շահագործման, պահպանման ու կառավարման, ինչպես նաև վերականգնվող աղբյուրներից էներգիայի արտադրության նպատակներով,

դ) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանցից բաղկացած որևէ այլ մարմին,

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է իրավաբանական անձ կամ որևէ այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

զ) «ձեռնարկություն» տերմինը կիրառվում է որևէ ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ,

է) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները, համապատասխանաբար, նշանակում են Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

ը) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է որևէ փոխադրում նավով կամ օդանավով, որը շահագործվում է մի ձեռնարկության կողմից, որի փաստացի կառավարման վայրը գտնվում է Պայմանավորվող պետությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ նավը կամ օդանավը շահագործվում են բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև,

թ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

- i) Հայաստանում՝ Ֆինանսների նախարարությունը, Պետական եկամուտների կոմիտե կամ իրենց լիազորած ներկայացուցիչները,
- ii) Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում՝ Ֆինանսների դաշնային նախարարությունը կամ մարմին, որին նախարարությունը տրամադրել է իր լիազորությունները,

ժ) «քաղաքացի» տերմինը նշանակում է.

- i) Հայաստանի պարագայում՝ ֆիզիկական անձ, ով ունի Հայաստանի քաղաքացիություն, և իրավաբանական անձ, գործընկերություն կամ ընկերակցություն, որը, որպես այդպիսին, իր կարգավիճակն ստացել է Հայաստանի գործող օրենքների հիման վրա,
- ii) Գերմանիայի Դաշնային Հանրապետության պարագայում՝ գերմանացի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքի իմաստով, և իրավաբանական անձ, գործընկերություն կամ ընկերակցություն, որը, որպես այդպիսին, իր կարգավիճակն ստացել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործող օրենքների հիման վրա,

Ժա) «ձեռնարկատիրական գործունեություն» տերմինը ներառում է մասնագիտական ծառայությունների և անկախ բնույթի այլ գործունեության իրականացումը,

2. Եթե համատեքստն այլ բան չի պահանջում, ապա սույն Համաձայնագրով չսահմանված որևէ տերմին Պայմանավորվող պետության կողմից Համաձայնագիրը կիրառելու ընթացքում ունի այն նշանակությունը, որը սահմանված է կիրառման ժամանակահատվածում այդ պետությունում գործող այն հարկերի մասին օրենսդրությամբ, որոնց վերաբերում է սույն Համաձայնագիրը, ընդ որում՝ տերմինի՝ տվյալ պետությունում կիրառվող հարկային օրենսդրությամբ սահմանված նշանակությունը գերակայում է նրա՝ տվյալ պետության այլ օրենքներով սահմանված այլ նշանակությունների նկատմամբ:

#### Հոդված 4 ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է անձ, ով, այդ Պետության օրենքների համաձայն, այդտեղ հարկատու է իր մշտական բնակության, ռեզիդենտության, հիմնադրման, կառավարման վայրի կամ այլ համանման չափանիշի հիման վրա, և ներառում է նաև այդ Պետությունը, դրա երկրամասերը, քաղաքական ստորաբաժանումները կամ տեղական իշխանությունները: Սակայն այդ տերմինը չի ներառում որևէ անձի, ով հարկատու է միայն այդ Պետությունում՝ միայն այդտեղ Պետությունում գտնվող աղբյուրներից ստացած եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի մասով:

2. Այն դեպքում, երբ, 1-ին կետի դրույթների հիման վրա, ֆիզիկական անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպով.

ա) նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան. իսկ եթե նա երկու Պետություններում էլ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի հետ իր անձնական և տնտեսական կապերը (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են,

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից ոչ մեկում իր տրամադրության տակ չունի մշտական կացարան, ապա նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար երկու Պետություններում էլ բնակվում է կամ չի բնակվում դրանցից և ոչ մեկում, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի քաղաքացին է,

դ) եթե նա երկու Պետությունների քաղաքացի է կամ դրանցից և ոչ մեկի քաղաքացին չէ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ, 1-ին կետի դրույթների հիման վրա, ֆիզիկական անձից տարբերվող անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կձգտեն փոխադարձ համաձայնությամբ որոշել, թե սույն Համաձայնագրի նպատակների համար այդ

անձը ո՞ր Պայմանավորվող պետության ռեզիդենտ պետք է համարվի: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում անձը չի համարվում Պայմանավորվող պետություններից որևէ մեկի ռեզիդենտ՝ Համաձայնագրով նախատեսված որևէ արտոնություն պահանջելու նպատակով:

## Հոդված 5 ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը մասնավորապես ներառում է.

- ա) կառավարման վայրը,
- բ) մասնաճյուղը,
- գ) գրասենյակը,
- դ) գործարանը,
- ե) արհեստանոցը և
- զ) հանքահորը, նավթի կամ գազի հորատանցքը, քարհանքը կամ բնական պաշարների արդյունահանման որևէ այլ վայր:

3. Շինարարական հրապարակը կամ կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիրը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեության իրականացումը համարվում են մշտական հաստատություն միայն այն դեպքում, երբ այդ վայրը, ծրագիրը կամ գործունեությունը շարունակվում են ավելի քան 9 ամիս:

4. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում.

ա) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման համար,

դ) գործունեության կայուն վայրի պահպանումը ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության կայուն վայրի պահպանումը ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

զ) գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես «ա» - «ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների որևէ համակցության համար՝ պայմանով, որ գործունեության կայուն վայրի պահպանման համընդհանուր գործունեությունն այդ համակցության արդյունքում շարունակի կրել նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից՝ եթե անձը, ով անկախ կարգավիճակով գործակալը չէ, ում նկատմամբ կիրառվում է 6-րդ կետը, գործում է ձեռնարկության անունից և ունի ու սովորաբար օգտագործում է Պայմանավորվող պետությունում ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, ապա այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող այդ Պետությունում՝ այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար իրականացվող որևէ գործունեության մասով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի անձի գործունեությունը սահմանափակվում է 4-րդ կետում նշվածով, որը, եթե անգամ իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ գործունեության կայուն վայրը չի վերածում մշտական հաստատության՝ այդ կետի դրույթների համաձայն:

6. Ձեռնարկությունը չի համարվում Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող միայն այն պատճառով, որ այդ Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում բրոքերի, ընդհանուր առևտրային գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող որևէ այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործեն իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության որևէ ռեզիդենտ ընկերության, կամ վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության որևէ ռեզիդենտ ընկերության կողմից, կամ որը ձեռնարկատիրական գործունեություն է

իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպով), ինքնին այդ ընկերություններից որևէ մեկին չի դարձնում մյուսի մշտական հաստատությունը:

### **Հոդված 6 ԵԿԱՄՈՒՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացված եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենքով, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Տերմինը, ամեն դեպքում, ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, այն իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը (ուզուֆրուկտը) և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող՝ փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Նավերը և օդանավերը չեն դիտարկվում որպես անշարժ գույք:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տալու դիմաց կամ որևէ այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացվող եկամուտների նկատմամբ:

### **Հոդված 7 ՇԱՀՈՒՅՔ ԶԵՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ**

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող

պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է վերը նշված ձևով, ապա շահույթը, որը, սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն, վերագրելի է այդ մշտական հաստատությանը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում սույն հոդվածի և 22-րդ հոդվածի նպատակներով 1-ին կետում նշված մշտական հաստատությանը վերագրելի շահույթն այն շահույթն է, որը մշտական հաստատությունը ենթադրաբար կստանար մասնավորապես ձեռնարկության այլ ստորաբաժանումների հետ իր տնտեսական կապերի արդյունքում, եթե այն լիներ ինքնուրույն և անկախ ձեռնարկություն, որն իրականացներ նույն կամ նույնանման գործունեություն նույն կամ նույնանման պայմաններով՝ հաշվի առնելով ձեռնարկության՝ մշտական հաստատության և ձեռնարկության այլ ստորաբաժանումների միջոցով իրականացրած գործառույթները, օգտագործած ակտիվները և ստանձնած ռիսկերը:

3. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը ճշգրտում է Պայմանավորվող պետություններից մեկում գտնվող մշտական հաստատությանը վերագրելի շահույթը և համապատասխանաբար հարկում է ձեռնարկության շահույթը, որը հարկվել էր մյուս Պայմանավորվող պետությունում, մյուս Պայմանավորվող պետությունը անհրաժեշտ չափով կրկնակի հարկումը վերացնելու նպատակով պետք է կատարի համապատասխան ճշգրտումներ, եթե համաձայն է առաջինը նշված Պայմանավորվող պետության կողմից կատարված ճշգրտմանը: Եթե մյուս Պայմանավորվող պետությունը համաձայն չէ ճշգրտմանը, ապա Պայմանավորվող պետությունները պետք է ձգտեն վերացնել այդպես առաջացած կրկնակի հարկումը փոխադարձ համաձայնության միջոցով:

4. Այն դեպքում, երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տեսակներ, որոնք առանձին դիտարկվում են սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

### Հոդված 8

#### ԾՈՎԱՅԻՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի կառավարման վայրը:

2. Սույն հոդվածի նպատակների համար նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը ներառում է նաև այն եկամուտները, որոնք ստացվում են

ա) նավերի կամ օդանավերի՝ առանց անձնակազմի վարձակալությունից և

բ) կոնտեյներների (այդ թվում՝ տրեյլերների և տրեյլերների փոխադրման համար օգտագործվող լրակազմերի) օգտագործումից կամ վարձակալությունից ,

եթե այդ եկամուտները վերագրելի են նավերի կամ օդանավերի շահագործումից ստացվող շահույթին:

3. Եթե ծովային փոխադրումներ իրականացնող ձեռնարկության փաստացի կառավարման վայրը նավի վրա է, ապա համարվում է, որ ձեռնարկությունը գտնվում է այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է այդ նավի գլխավոր նավահանգիստը, կամ, երբ չկա նման նավահանգիստ, ապա այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է նավը շահագործող ընկերությունը:

4. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև որևէ միավորումում, համատեղ ձեռնարկատիրական գործունեության մեջ կամ միջազգային գործակալությունում ունեցած մասնակցությունից ստացած շահույթի նկատմամբ:

### Հոդված 9

#### ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

##### 1. Այն դեպքում, երբ՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակից է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալին, կամ

բ) նույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակից են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալին,

և այս դեպքերում երկու ձեռնարկությունների միջև առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա որևէ շահույթ, որը հաշվեգրված կլինի այդ ձեռնարկություններից մեկին, բայց այդ պայմանների պատճառով

նման ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի կազմում ընդգրկում և համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում, և այդ ձևով ներառված շահույթը շահույթ է, որը պետք է հաշվեգրված լիներ առաջինը նշված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև փոխհարաբերությունները լինեին այնպիսին, ինչպիսին անկախ ձեռնարկությունների միջև է, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդպիսի շահույթից իր կողմից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, եթե այդ մյուս Պետությունը ճշգրտումը համարում է արդարացի: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի կառնվեն սույն Համաձայնագրի մյուս դրույթները, և Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններն անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

#### **Հոդված 10 ՇԱՀԱՔԱԺԻՆՆԵՐ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այդ Պայմանավորվող պետության օրենքների համաձայն. սակայն եթե այդ շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ դեպքում գանձված հարկը չպետք է գերազանցի.

ա) շահաբաժինների համախառն գումարի 7 տոկոսը, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերն ընկերություն է (ոչ՝ գործընկերություն), որն ուղղակիորեն տնօրինում է շահաբաժինները վճարող ընկերության բաժնետիրական կապիտալի առնվազն 25 տոկոսը,

բ) շահաբաժինների համախառն գումարի 10 տոկոսը՝ մյուս բոլոր դեպքերում:

Սույն կետի դրույթները չեն ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է եկամուտ բաժնեմասերից, «jouissance»-ի բաժնեմասերից կամ «jouissance»-ի իրավունքներից, հիմնադիրների բաժնեմասերից կամ՝ այլ եկամուտ, որի նկատմամբ կիրառվում են հարկման նույն մոտեցումները, որոնք կիրառվել են բաժնեմասերի հարկման նկատմամբ՝ այն Պայմանավորվող պետության օրենքների համաձայն, որի ղեզիդենտն է շահաբաժիններ վճարող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ղեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ղեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունն իր այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և մասնակցությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ղեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, ապա այդ մյուս Պետությունը չի կարող ո՛չ հարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ղեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, ո՛չ էլ ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

### **Հոդված 11 ՏՈԿՈՍՆԵՐ**

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ղեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են՝ այդ Պետության

օրենքների համաձայն. բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ դեպքում գանձված հարկը չի կարող գերազանցել տոկոսների համախառն գումարի 5 տոկոսը:

### 3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝

ա) Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում առաջացող և Հայաստանի Հանրապետության Կառավարությանն ու Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին վճարվող տոկոսներն ազատվում են Գերմանական հարկից,

բ) Հայաստանի Հանրապետությունում առաջացող և արտահանման կամ օտարերկրյա ուղղակի ներդրումների համար Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից երաշխավորված վարկերի դիմաց կամ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությանը, Deutsche Bundesbank-ին, Kreditanstalt für Wiederaufbau-ին կամ DEG-Deutsche Investitions- und Entwicklungsgesellschaft mbH-ին վճարվող տոկոսներն ազատվում են Հայկական հարկից:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է եկամուտ որևէ տեսակի պարտապահանջից՝ անկախ գրավադրային ապահովումից և պարտապանի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից, և մասնավորապես՝ եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, այդ թվում՝ նման արժեթղթերի, պարտատոմսերի կամ փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներից և մրցանակներից: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն հոդվածի նպատակներով տոկոս չեն համարվում:

5. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ տոկոսներն առաջանում են իր այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսներն այն դեպքում են համարվում Պայմանավորվող պետությունում առաջացած, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն այն դեպքում, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի հետ կապված պարտքի

կապակցությամբ կատարվել է տոկոսների վճարումը, և այդպիսի տոկոսներն առաջացել են այդպիսի մշտական հաստատության կողմից, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը:

7. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջի կապակցությամբ վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքների համաձայն և սույն Համաձայնագրի մյուս դրույթների կիրառման պայմանով:

## Հոդված 12 ՌՈՅԱԼԹԻՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի ռոյալթիները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի հետ կապված դրանք առաջանում են, այդ Պետության օրենքների համաձայն. բայց եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ դեպքում գանձված հարկը չպետք է գերազանցի ռոյալթիների համախառն գումարի 6 տոկոսը:

3. «Ռոյալթիներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է ամեն տեսակի վճարում՝ որևէ գրական, գեղարվեստական կամ գիտական աշխատանքի, այդ թվում՝ հեռուստատեսային և ռադիոհաղորդակցությունների համար օգտագործվող կինոնկարների, ֆիլմերի, սկավառակների, որևէ պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի հեղինակային իրավունքի կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ուղալթիների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են ուղալթիները, իր այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում են ուղալթիները, փաստացի կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքերում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ուղալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն երբ ուղալթիներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է ուղալթիներ վճարելու պարտավորությունը, և այդպիսի ուղալթիների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի ուղալթիները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկությունների համար վճարվող ուղալթիների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքների համաձայն և սույն Համաձայնագրի մյուս դրույթների կիրառման պայմանով:

### Հոդված 13

#### ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՃ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող՝ 6-րդ հոդվածում սահմանված անշարժ գույքի օտարումից ստացած արժեքի հավելածը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի օտարումից

առաջացած արժեքի հավելվածը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ միասին) օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելվածը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի կամ օդանավերի կամ այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործմանը վերաբերող՝ շարժական գույքի օտարումից ստացված արժեքի հավելվածը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է է ձեռնարկության փաստացի կառավարման վայրը:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից բաժնետոմսերի օտարումից ստացված արժեքի հավելվածը, որի արժեքի 50 տոկոսից ավելին ուղղակիորեն կան անուղղակիորեն ստացվում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նշված գույքից տարբեր որևէ այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելվածը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է գույքն օտարողը:

6. Այն դեպքում, երբ անձը, ով 5 կամ ավել տարի եղել է մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ և դարձել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ապա 5-րդ կետը չի կարող առաջինը նշված Պետությանը խոչընդոտել ազգային օրենքների համաձայն հարկելու առաջինը նշված Պետության ռեզիդենտ ընկերության կապիտալի բաժնետոմսերի արժեքի հավելվածը այդ անձի՝ առաջինը նշված Պետության ռեզիդենտը լինելու ժամանակահատվածի կտրվածքով: Այդ դեպքում առաջինը նշված Պետությունում հարկված կապիտալի հավելվածը չպետք է ներառվի մյուս Պետության կողմից կապիտալի հավելվածի հետագա գնահատման ժամանակ:

#### **Հոդված 14** **ԵԿԱՄՈՒՏ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ**

1. 15-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածներում նշված դեպքերում վարձու աշխատանքի դիմաց Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքն իրականացվում է այդտեղ, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Անկախ 1-ին կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում կատարվող վարձու աշխատանքի դիմաց ստացվող վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը նշված Պետությունում, եթե

ա) ստացողը դիտարկվող ֆիսկալ տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող որևէ տասներկուամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը:

3. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ միջազգային փոխադրումներում շահագործվող նավի վրա կամ օդանավում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացվող վարձատրությունը կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է նավը կամ օդանավը շահագործող ձեռնարկության փաստացի կառավարման վայրը:

### **Հոդված 15 ՏԵՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ**

Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության տնօրենների խորհրդի անդամ ստացած հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

### **Հոդված 16 ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ**

1. Անկախ 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ, օրինակ՝ թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստ կամ երաժիշտ, կամ որպես մարզիկ իրականացրած անհատական գործունեությունից ստացված եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այն դեպքում, երբ, 1-ին կետի իմաստով արվեստի գործչի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անհատական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, անկախ 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներից, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում Պայմանավորվող պետություններից մեկում արվեստի գործչի կամ մարզիկի իրականացրած գործունեության նկատմամբ, եթե այցը այդ Պետություն ամբողջությամբ կամ հիմնականում ֆինանսավորվում է մյուս Պայմանավորվող պետության հասարակական հիմնադրամների, կամ երկրամասերից մեկի կամ քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների կողմից կամ այնպիսի կազմակերպության կողմից, որն այդ մյուս Պետությունում ճանաչված է որպես բարեգործական կազմակերպություն: Այս դեպքում ստացված եկամուտը կարող է հարկվել միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է անձը:

#### Հոդված 17

#### ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ, ԱՆՈՒՏԵՏՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

1. 18-րդ հոդվածի 2-րդ կետում նշված դեպքերում Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված կենսաթոշակները, անուիտետները և համանման այլ վճարումները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. Անկախ 1-ին կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետության սոցիալական ապահովագրության օրենսդրության համաձայն վճարված միանվագ վճարումները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

3. Անկախ 1-ին կետի դրույթներից՝ պարբերական և ոչ պարբերական այն վճարումները, որոնք կատարվում են Պայմանավորվող պետություններից մեկի, նրա երկրամասերից կամ քաղաքական ստորաբաժանումներից կամ տեղական իշխանություններից մեկի կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին՝ ի փոխհատուցումն քաղաքական հետապնդման (ներառյալ վնասի փոխհատուցման վճարները) կամ անարդարության, կամ պատերազմի, զինվորական կամ քաղաքացիական այլընտրանքային ծառայությունների ընթացքում պատճառված վնասի, կամ հանցագործության, պատվաստման կամ նմանատիպ այլ պատճառներով հասցված վնասի, ենթակա են հարկման միայն առաջինը նշված Պայմանավորվող պետությունում:

4. «Անուփտետ» տերմինը նշանակում է՝ որոշակի գումար, որը որոշակի պարտավորության շրջանակում որպես դրամով կամ դրամական արտահայտությամբ համարժեք կամ ամբողջական փոխհատուցում ենթակա է սահմանված ժամկետներով պարբերական վճարման ցմահ կամ սահմանված կամ սահմանվելիք ժամանակահատվածում:

### **ՀՈԴՎԱԾ 18** **ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա երկրամասերից, քաղաքական ստորաբաժանումներից կամ տեղական իշխանության մարմիններից որևէ մեկի կողմից այդ Պետությանը, երկրամասին կամ քաղաքական ստորաբաժանմանը կամ տեղական իշխանության մարմինն մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված աշխատավարձը, ռոճիկը և նմանատիպ այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի աշխատավարձը, ռոճիկը և նմանատիպ այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում, և այդ Պետության ռեզիդենտ ֆիզիկական անձը

- i) այդ Պետության քաղաքացի է, կամ
- ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտ բացառապես ծառայությունները մատուցելու նպատակով:

2. ա) Անկախ 1-ին կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետության կամ նրա երկրամասերից, քաղաքական ստորաբաժանումներից կամ տեղական իշխանության մարմիններից մեկի կողմից կամ վերջիններիս կողմից ստեղծված հիմնադրամներից այդ Պետությանը, նրա երկրամասին կամ քաղաքական ստորաբաժանմանը կամ տեղական իշխանության մարմինն մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված կենսաթոշակները և նմանատիպ այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը այդ Պետության ռեզիդենտն ու քաղաքացին է:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները նմանապես պետք է կիրառվեն աշխատավարձերի, ռոճիկների, կենսաթոշակների և այլ նմանատիպ վարձատրությունների նկատմամբ, որոնք վճարվում են հանրային իրավունքի համաձայն ստեղծված իրավաբանական անձի կողմից, որն իրականացնում է կառավարական բնույթի գործառույթներ, եթե դա փոխադարձաբար համաձայնեցված է իրավասու մարմինների միջև՝ այդ հանրային օրենքի համաձայն ստեղծված իրավաբանական անձի համար:

4. 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության, նրա երկրամասերից, քաղաքական ստորաբաժանումներից կամ տեղական իշխանության մարմիններից մեկի կամ այդ Պետության հանրային իրավունքի համաձայն ստեղծված այլ իրավաբանական անձի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների մատուցման դիմաց ստացված աշխատավարձերի, ռոճիկների, կենսաթոշակների և նմանատիպ այլ վարձատրությունների նկատմամբ:

5. 1-ին և 2-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև այն աշխատավարձերի, ռոճիկների, կենսաթոշակների և նմանատիպ վարձատրությունների նկատմամբ, որոնք վճարվում են անհատին՝ Գյոթեի անվան ինստիտուտին (Goethe Institut) և Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությանը (Deutscher Akademischer Austauschdienst) կամ համապատասխան իրավասու մարմինների կողմից փոխհամաձայնաբար ընտրված այլ նմանատիպ հաստատություններին մատուցվող ծառայությունների դիմաց: Այն դեպքում, երբ նշված վարձատրությունը չի հարկվում այն Պետությունում, որտեղ հիմնադրվել է այդ հաստատությունը, կիրառվում է 14-րդ հոդվածը:

6. 1-ին կետը կիրառվում է նաև այն վարձատրությունների նկատմամբ, որոնք Պայմանավորվող պետության, նրա երկրամասերից կամ քաղաքական ստորաբաժանումներից կամ տեղական իշխանության մարմիններից որևէ մեկի կողմից իրականացվող տնտեսական աջակցային ծրագրի շրջանակում հատկացվում են բացառապես այդ Պետության կամ նրա երկրամասերից կամ քաղաքական ստորաբաժանումներից կամ տեղական իշխանության մարմիններից որևէ մեկի միջոցներից և վճարվում այն մասնագետներին կամ կամավորականներին, ովքեր մյուս Պետություն են գործուղվում վերջինիս համաձայնությամբ:

### Հոդված 19

#### ՀՐԱՎԻՐՎԱԾ ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

1. Ֆիզիկական անձը, ով Պայմանավորվող պետության կամ այդ Պայմանավորվող պետության համալսարանի, քոլեջի, դպրոցի, թանգարանի կամ այլ մշակութային կամ ուսումնական հաստատության հրավերով կամ մշակութային փոխանակումների պաշտոնական ծրագրի շրջանակում ժամանել է այդ Պայմանավորվող պետություն երկու տարին չգերազանցող ժամկետով՝ ուսուցանելու, դասախոսելու կամ հաստատությունում հետազոտություն իրականացնելու նպատակով, և ով հանդիսանում կամ անմիջապես մինչև ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ազատվում է այդպիսի գործունեության համար վարձատրության հարկումից առաջինը նշված Պայմանավորվող պետությունում՝ պայմանով, որ այդպիսի վարձատրությունը նա ստանում է այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. Այն վճարումները, որոնք ուսանողը կամ աշխատանքային ստաժ անցնողը, ով հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ և առաջինը նշված Պետությունում է գտնվում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, ստանում է իր կեցության, ուսման կամ մասնագիտացման կապակցությամբ, ենթակա չեն հարկման այդ Պետությունում՝ պայմանով, որ այդ վճարումներն առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

### Հոդված 20

#### ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամուտների տեսակները, որոնք նշված չեն սույն Համաձայնագրի հոդվածներում, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքից ստացված եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում իր այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ

վճարվում է եկամուտը, իրապես պատկանում են այդ մշտական հաստատությանը: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

### **Հոդված 21 ԳՈՒՅՔ**

1. Այն գույքը, որը ներկայացված է 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի տեսքով, և որը պատկանում է Պայմանավորվող պետության ռեզիդենտին և գտնվում մյուս Պայմանավորվող պետությունում, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այն գույքը, որը ներկայացված է շարժական գույքի տեսքով և կազմում է այն մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս, որը Պայմանավորվող պետության ձեռնարկությունն ունի մյուս Պայմանավորվող պետությունում, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Այն գույքը, որը ներկայացված է միջազգային փոխադրումներում շահագործվող նավերով կամ օդանավերով և նավերի ու օդանավերի շահագործման համար անհրաժեշտ շարժական գույքով, ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի կառավարման վայրը:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի բոլոր մյուս տեսակները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

### **Հոդված 22 ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ**

1. Հայաստանում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպով.

ա) Եթե Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որը, սույն Համաձայնագրի դրույթների համաձայն, կարող է հարկվել Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, ապա Հայաստանը թույլ է տալիս.

- i) այդ ռեզիդենտի եկամտահարկից հանել Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում վճարված եկամտահարկին հավասար գումար,
- ii) այդ ռեզիդենտի գույքահարկից հանել Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում վճարված գույքահարկին հավասար գումար:

Սակայն այդպիսի հանումները երկու դեպքում էլ չպետք է գերազանցեն մինչև ըստ հանգամանքների վերագրելի նվազեցում տրամադրելը հաշվարկված եկամտի կամ գույքի նկատմամբ Հայկական հարկի այն մասը, որը կարող էր հարկվել Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում:

բ) Եթե սույն Համաձայնագրի որևէ դրույթի համաձայն Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը Հայաստանում ազատվում է հարկումից, ապա Հայաստանը, համեմայն դեպս, կարող է այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը կամ գույքը:

2. Այն դեպքում, երբ Գերմանիայի Դաշնային Հանրապետության ռեզիդենտն ստանում է եկամուտ կամ տնօրինում է գույք, որոնք, սույն Համաձայնագրի դրույթների համաձայն, կարող են հարկվել Հայաստանում, ապա կիրառվում է հետևյալը.

ա) բացառությամբ «գ» կետում նշված դեպքերի՝ եկամուտը չի ներառվում հարկման բազայի մեջ, որի նկատմամբ կիրառվում է Գերմանական հարկը: Շահաբաժինների դեպքում սույնը կիրառվում է միայն այն շահաբաժինների նկատմամբ, որոնք Գերմանիայի Դաշնային Հանրապետության ռեզիդենտ ընկերությանը (բացառությամբ գործընկերությունների) վճարում է Հայաստանի ռեզիդենտ ընկերությունը, որի կապիտալի առնվազն 10 տոկոսի ուղղակի սեփականատեր է հանդիսանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության ռեզիդենտ ընկերությունը: Սույն կետի առաջին նախադասությամբ սահմանված արտոնությունը չի կիրառվում հարկերի վճարումից ազատված ընկերությունների կողմից վճարվող շահաբաժինների նկատմամբ կամ այն շահաբաժինների նկատմամբ, որոնք վճարող կազմակերպությունը կարող է նվազեցնել Հայկական հարկ վճարելու նպատակներով, կամ՝ այն շահաբաժինների նկատմամբ, որոնք Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքի համաձայն վճարվել են այն անձին, ով Գերմանիայի Դաշնային Հանրապետության ռեզիդենտ ընկերություն չէ: Գերմանական գույքի հարկի հաշվարկման բազայից պետք է բացառվի այնպիսի գույքը, որը 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն հարկման ենթակա է Հայաստանում, ինչպես նաև՝ այն մասը շահաբաժինների, որոնք եթե վճարվում են, ապա, վերը նշված նախադասությունների համաձայն, չեն ներառվի հարկման բազայի մեջ:

բ) Գերմանիայի Դաշնային Հանրապետությունն իրավունք ունի հարկի դրույքաչափի որոշման ժամանակ հաշվի առնել եկամտի և գույքի այն տեսակները, որոնք, սույն Համաձայնագրի դրույթների համաձայն, ազատված են գերմանական հարկից:

գ) Եկամտի հետևյալ տեսակների մասով թույլատրվում է, գերմանական հարկի մասին օրենքի դրույթների համաձայն, եկամտից գանձվող գերմանական հարկերից կատարել արտասահմանյան հարկի հաշվանցում Հայաստանի օրենքի և սույն Համաձայնագրի դրույթների համաձայն վճարված եկամտի այդ տեսակների հարկերի մասով:

- i) 10-րդ հոդվածի իմաստով շահաբաժիններ, որոնց նկատմամբ «ա» կետը չի կիրառվում,
- ii) տոկոսներ,
- iii) ռոյալթիներ,
- iv) կապիտալի հավելած, որի նկատմամբ կիրառվում է 13-րդ հոդվածի 4-րդ կետը,
- v) եկամուտ, որի նկատմամբ կիրառվում է 15-րդ հոդվածը,
- vi) եկամուտ, որի նկատմամբ կիրառվում է 16-րդ հոդվածը,
- vii) եկամուտ, որի նկատմամբ կիրառվում է 17-րդ հոդվածը:

դ) «ա» կետի դրույթները 7-րդ և 10-րդ հոդվածների իմաստով կիրառելի են եկամտի տեսակների, իսկ 13-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով՝ օտարված գույքից ստացված շահույթի նկատմամբ այնքանով, որքանով այդ եկամտի կամ շահույթի տեսակներն ստացվել են ապրանքների և արտադրանքի արտադրությունից, մշակումից, վերամշակումից կամ տեղակայումից, բնական ռեսուրսների շահագործումից և արդյունահանումից, բանկային և ապահովագրական գործունեությունից, առևտրից կամ ծառայությունների մատուցումից, կամ եթե եկամտի կամ շահույթի տեսակները տնտեսապես վերագրելի են այս գործունեության տեսակներին: Սա կիրառելի է միայն այն դեպքում, երբ ձեռնարկությունում առկա է ձեռնարկատիրական նպատակների իրականացման համար անհրաժեշտ հագեցվածությունը: Սա համապատասխանաբար կիրառվում է եկամտի աղբյուր հանդիսացած գույքի նկատմամբ՝ 7-րդ և 10-րդ հոդվածների իմաստով: Եթե «ա» կետը կիրառելի չէ, ապա կրկնակի հարկումը բացառվում է հարկերի հաշվանցման մեթոդով՝ «գ» կետով սահմանված կարգով:

ե) Չնայած «ա» կետին՝ կրկնակի հարկումը բացառվում է հարկերի հաշվանցման մեթոդով՝ «գ» կետով սահմանված կարգով, եթե

- i) Պայմանավորվող պետությունում եկամտի կամ գույքի տեսակը կամ դրանց տարրերը սահմանված են սույն Համաձայնագրի տարրեր դրույթներում, և եթե, որպես այդ տարրեր տեղակայման հետևանք, նման եկամուտը կամ գույքը ենթարկվեն կրկնակի հարկման, չհարկվեն կամ քիչ հարկվեն, և նաև կրկնակի հարկման դեպքում այս խնդիրը չի կարող լուծվել 24-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ կետերի համաձայն սահմանված ընթացակարգով,
- ii) Հայաստանը կարող է սույն Համաձայնագրի դրույթների համաձայն հարկել եկամտի կամ գույքի տեսակները կամ դրանց տարրերը, բայց գործնականում չի հարկում,
- iii) խորհրդակցելուց հետո Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը դիվանագիտական ուղիներով ծանուցում է Հայաստանի Հանրապետությանը եկամտի կամ գույքի տեսակների կամ դրանց տարրերի վերաբերյալ, որոնց նկատմամբ մտադիր է կիրառել «գ» կետով սահմանված հարկերի հաշվանցման վերաբերյալ դրույթները: Ծանուցված եկամտի, գույքի կամ դրանց տարրերի կրկնակի հարկումը բացառվում է ծանուցում տալու ամսաթվին հաջորդող օրացուցային տարվա առաջին օրվանից՝ հարկերը հաշվանցելու իրավունք տալու միջոցով:

### Հոդված 23 ԱՆԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող պետության քաղաքացիները մյուս Պայմանավորվող պետությունում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց նույն հանգամանքներում, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պայմանավորվող պետության քաղաքացիները: Սույն դրույթը, չնայած 1-ին հոդվածի դրույթներին, կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտ՝ քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության կատարման, քան այն հարկումը և դրա հետ կապված պարտավորության կատարումն է, որոնց նույն հանգամանքներում, մասնավորապես՝ կապված

ռեզիդենտության հետ, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել համապատասխան Պետության քաղաքացիները:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը չպետք է պակաս բարենպաստ լինի այդ մյուս Պետությունում այդ մյուս Պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումից: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին, քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա, հարկման նպատակներով այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր տրամադրել, ինչպիսիք նա շնորհում է իր ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին, 11-րդ հոդվածի 7-րդ կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետերի դրույթները, տոկոսները, ուղալթին և Պայմանավորվող պետության ձեռնարկության կատարած այլ վճարումները մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով, ենթակա են հանման նույն պայմաններով, ինչ պայմաններով հանվում են առաջինը նշված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես, Պայմանավորվող պետության ձեռնարկության որևէ պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, այդ ձեռնարկության հարկվող գույքի որոշման նպատակով, պետք է ենթակա լինի հանման նույն պայմաններով, ինչ պայմաններով հանվում է պարտքը առաջինը նշված Պետության ռեզիդենտին:

5. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ ուղղակիորեն կամ անուղղակի կերպով վերահսկվում է այդ մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջինը նշված Պետությունում ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարման, քան առաջինը նշված Պետության այլ նման ձեռնարկությունները ենթակա են կամ կարող են ենթարկվել:

6. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են ցանկացած տեսակի և ձևի հարկերի նկատմամբ:

### **Հոդված 24** **ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման, նա կարող է, այդ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքներով նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է, կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Համաձայնագրի 23-րդ հոդվածի 1-ին կետին՝ այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի քաղաքացին է: Գործը պետք է ներկայացվի սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Իրավասու մարմինը, եթե դիմումը համարի հիմնավորված, և եթե ինքը չկարողանա հանգել գոհացուցիչ որոշման, կձգտի հարցը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ՝ նպատակ ունենալով բացառելու սույն Համաձայնագրին ոչ համապատասխան հարկումը: Ձեռք բերված համաձայնությունները ենթակա են կատարման՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքներում առկա որևէ ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կձգտեն փոխադարձ համաձայնությամբ լուծել բոլոր այն դժվարությունները կամ հակասությունները, որոնք կարող են առաջանալ Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ: Նրանք կարող են նաև խորհրդակցել Համաձայնագրով չնախատեսված դեպքերում՝ կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ՝ նախորդ կետերի իմաստով համաձայնության հասնելու նպատակով, կամ դա անել իրենցից կամ իրենց ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողովի միջոցով:

5. Այն դեպքում, երբ, սույն հոդվածի 1-ին կետի համաձայն, անձը Պայմանավորվող պետության իրավասու մարմնին է ներկայացրել գործը այն հիմքով, որ մեկ կամ երկու Պայմանավորվող պետությունների գործողություններն այդ անձի համար հանգեցրել են Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման, և իրավասու մարմիններն այդ հարցի շուրջ չեն

կարողանում համաձայնության հասնել 2-րդ կետով սահմանված կարգով՝ մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմինն գործը ներկայացնելուց հետո երեք տարվա ընթացքում, ապա գործից բխող չլուծված խնդիրները պետք է ներկայացվեն արբիտրաժ, եթե իրավասու մարմիններից որևէ մեկը դա պահանջի: Դիմում ներկայացրած անձը պետք է տեղեկացվի այդ պահանջի մասին: Այնուամենայնիվ, այս չլուծված խնդիրները չեն կարող ներկայացվել արբիտրաժ, եթե Պայմանավորվող պետություններից որևէ մեկի դատարանի կամ վարչական ատյանի կողմից արդեն իսկ կայացվել է որոշում: Արբիտրաժային որոշումը պարտադիր է երկու Պայմանավորվող պետությունների համար և պետք է իրականացվի անկախ այդ Պետությունների ներքին օրենքներով սահմանված ժամանակային սահմանափակումներից, եթե արբիտրաժային որոշման մասին իրենց հայտնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում, իրավասու մարմինները չգտնեն այլ լուծումներ, կամ գործը ներկայացրած անձը չընդունի արբիտրաժային որոշումը կատարելու փոխադարձ համաձայնությունը: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կորոշեն սույն կետի կիրառման կարգը:

### Հոդված 25

#### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կփոխանակեն տեղեկություններ, որոնք պատշաճ կհամարվեն սույն Համաձայնագրի դրույթների իրականացման կամ ներքին օրենքների կիրառման կամ կատարման համար Պայմանավորվող պետությունների, նրանց երկրամասերից կամ քաղաքական ստորաբաժանումներից կամ տեղական իշխանության մարմիններից մեկի անունից կիրառվող որևէ տեսակի և բնույթի հարկի վերաբերյալ այն չափով, որքանով դրա հիման վրա հարկումը չի հակասում Համաձայնագրին: Տեղեկությունների փոխանակումը չի սահմանափակվում Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածներով:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն հոդվածի 1-ին կետի համաձայն ստացված որևէ տեղեկություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես այդ Պետության ներքին օրենքների համաձայն ստացված տեղեկությունը, և հաղորդվում է միայն այն անձանց կամ մարմիններին (այդ թվում՝ դատարաններին և վարչական մարմիններին), որոնք առնչվում են 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ գանձմանը, հարկադիր բռնագանձմանը կամ դատական հետապնդմանը, բողոքարկումների քննմանը: Այդ անձինք կամ մարմինները տեղեկությունն օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Այդ նպատակների համար տեղեկությունը կարող է հրապարակվել

վարչական կամ քրեական քննության ընթացքում, բաց դատական նիստերի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ, եթե դա նախատեսված է Պայմանավորվող պետությունների համապատասխան օրենքներով: Չնայած վերոգրյալին՝ մի Պայմանավորվող պետությունից ստացված տեղեկությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով, եթե այլ նպատակներով այդպիսի տեղեկության օգտագործումը նախատեսված է երկու Պետությունների օրենքներով, և տրամադրող Պայմանավորվող պետության իրավասու մարմինը թույլատրում է նման օգտագործումը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝

ա) իրականացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական պրակտիկային հակասող վարչական միջոցառումներ,

բ) ներկայացնելու տեղեկություններ, որոնք հասանելի չեն այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչական գործառնության ընթացքում,

գ) ներկայացնելու տեղեկություններ, որոնք բացահայտում են որևէ արտադրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ՝ տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Եթե Պայմանավորվող պետության կողմից տեղեկությունները պահանջվել են սույն հոդվածի համաձայն, մյուս Պայմանավորվող պետությունը պահանջված տեղեկություններն ստանալու համար պետք է օգտագործի տեղեկությունների ձեռք բերման իր միջոցները նույնիսկ այն դեպքում, եթե այդ մյուս Պետությունն իր հարկային նպատակների համար կարող է չունենալ այդպիսի տեղեկությունների կարիքը: Նախորդ նախադասության մեջ պարունակվող պարտավորությունը ենթակա է սահմանափակման 3-րդ կետով, բայց այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես Պայմանավորվող պետությանը տրվող թույլտվություն՝ մերժելու տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ ինքը չունի այդպիսի տեղեկությունների նկատմամբ ներքին հետաքրքրություն:

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես Պայմանավորվող պետությանը տրվող թույլտվություն՝ մերժելու տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ տեղեկություններին տիրապետում է բանկը, այլ ֆինանսական հաստատություն, նշանակված անձը կամ

գործակալությունում աշխատող անձը կամ խնամակալը, կամ՝ որ այն վերաբերում է անձի անձնական շահերին:

## **Հոդված 26** **ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

1. Պայմանավորվող պետությունները միմյանց աջակցություն կցուցաբերեն եկամտային հայցերի հավաքագրման գործում: Այդ աջակցությունը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածներով: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են փոխադարձ համաձայնությամբ սահմանել սույն հոդվածի կիրառման եղանակը:

2. «Եկամտային հայց» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ Պայմանավորվող պետության, նրա երկրամասերից կամ քաղաքական ստորաբաժանումներից կամ տեղական իշխանության մարմիններից մեկի անունից գանձվող որևէ տեսակի և բնույթի հարկի գծով առաջացած ապառքի գումար այնքանով, որանով այդ հարկումը չի հակասում սույն Համաձայնագրին կամ որևէ այլ միջազգային փաստաթղթի, որի Կողմեր են Պայմանավորվող պետությունները, ինչպես նաև՝ այդպիսի գումարի հետ կապված տոկոսներ, վարչական տույժեր և հավաքագրման կամ պահման ծախսեր:

3. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության եկամտային հայցը պետք է ապահովվի այդ Պետության օրենքներով և վերաբերում է այն անձի ապառքին, որն այդ պահին այդ Պետության օրենքներով չի կարող կանխել դրա հավաքագրումը, այդ եկամտային հայցը, այդ Պետության իրավասու մարմինների պահանջով, գանձման նպատակով կընդունվի մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմինների կողմից: Այդ եկամտային հայցը կհավաքագրվի այդ մյուս Պետության կողմից՝ նրա սեփական հարկերի հարկադրման և հավաքագրման համար կիրառելի օրենքների դրույթների համաձայն՝ այնպես, ինչպես եթե այդ եկամտային հայցը այդ մյուս Պետության եկամտային հայցը լիներ:

4. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության եկամտային հայցն այնպիսի հայց է, որի վերաբերյալ այդ Պետությունը կարող է իր օրենքի համաձայն գանձումն ապահովելու համար պահպանման միջոցներ ձեռնարկել, ապա այդ եկամտային հայցն այդ Պետության իրավասու մարմնի պահանջով պետք է պահպանման միջոցներ ձեռնարկելու նպատակով ընդունվի մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից: Այդ մյուս Պետությունը

պետք է իր օրենքների դրույթների համաձայն պահպանման միջոցներ ձեռնարկի այդ եկամտային հայցի առնչությամբ՝ այնպես, ինչպես եթե այդ եկամտային հայցն այդ մյուս Պետության եկամտային հայցը լիներ, եթե նույնիսկ այդ միջոցների կիրառման պահին եկամտային հայցը հարկադրված չէ կատարման առաջինը նշված Պետությունում, կամ ապառքը վերաբերում է այն անձին, ով իրավունք ունի կանխելու դրա հավաքագրումը:

5. Անկախ 3-րդ և 4-րդ կետերի դրույթներից՝ Պայմանավորվող պետության կողմից 3-րդ և 4-րդ կետերի նպատակներով ընդունված եկամտային հայցը որպես այդպիսին ենթակա չէ այդ Պետությունում այդ Պետության օրենքներով եկամտային հայցի նկատմամբ կիրառելի ժամանակային սահմանափակման կամ վերապահված որևէ գերակայության: Բացի այդ՝ Պայմանավորվող պետության կողմից 3-րդ կամ 4-րդ կետերի նպատակներով ընդունված եկամտային հայցը չի կարող այդ Պետությունում ունենալ որևէ գերակայություն, որը կիրառելի է այդ եկամտային հայցի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով:

6. Պայմանավորվող պետության եկամտային հայցի առկայության, վավերականության կամ գումարի վերաբերյալ դատական գործերը չեն կարող ներկայացվել մյուս Պայմանավորվող պետության դատարան կամ վարչական մարմիններ:

7. Եթե Պայմանավորվող պետության կողմից 3-րդ կամ 4-րդ կետերով սահմանված պահանջների ներկայացումից հետո որևէ պահի՝ նախքան մյուս Պայմանավորվող պետության կողմից համապատասխան եկամտային հայցի հավաքագրումն ու առաջինը նշված Պետությանը փոխանցումը, համապատասխան եկամտային հայցը դադարում է գոյություն ունենալ՝

ա) 3-րդ կետին համապատասխանող պահանջի դեպքում՝ առաջինը նշված Պետության եկամտային հայցը, որը ենթակա է կատարման այդ Պետության օրենքների համաձայն, և ապառքը վերաբերում է այն անձին, որն այդ պահին չի կարող այդ Պետության օրենքների համաձայն կանխել դրա հավաքագրումը, կամ

բ) 4-րդ կետին համապատասխանող պահանջի դեպքում՝ առաջինը նշված Պետության եկամտային հայցը, որի առնչությամբ այդ Պետությունը կարող է, իր օրենքների համաձայն, պահպանման միջոցներ ձեռնարկել դրա հավաքագրումն ապահովելու համար,

ապա առաջինը նշված Պետության իրավասու մարմինն անմիջապես պետք է ծանուցի մյուս Պետության իրավասու մարմինն այդ փաստի մասին, և առաջինը

նշված Պետությունը այդ մյուս Պետության ընտրությամբ պետք է դադարեցնի կամ հետ վերցնի իր հայցը:

8. Սույն հոդվածի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝

ա) իրականացնելու իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին կամ վարչական պրակտիկային հակասող վարչական միջոցառումներ,

բ) իրականացնելու պետական քաղաքականությանը (հասարակական կարգին) հակասող միջոցառումներ,

գ) ցուցաբերելու աջակցություն, եթե մյուս Պայմանավորվող պետությունը չի իրականացրել հավաքագրման կամ պահպանման համար իր օրենքներով կամ վարչական պրակտիկայով ընդունված հնարավոր բոլոր ողջամիտ միջոցները,

դ) ցուցաբերելու աջակցություն այն դեպքերում, երբ վարչական բեռն այդ Պետության համար բացահայտորեն համամասնական չէ մյուս Պայմանավորվող պետության ստացած օգուտին:

#### **Հոդված 27**

#### **ԱՐՔՅՈՒՐԻ ՄՈՏ ՀԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

1. Եթե Պայմանավորվող պետություններից մեկում մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած շահաբաժինները, տոկոսները, ոռոյալթինները կամ եկամտի այլ տեսակները հարկվում են աղբյուրի մոտ, ապա առաջինը նշված Պետության ներքին օրենքներով սահմանված չափով աղբյուրի մոտ հարկ գանձելու իրավունքի վրա Համաձայնագրի դրույթները չեն տարածվում:

2. Աղբյուրի մոտ գանձված հարկերը պետք է վերադարձվեն հարկ վճարողի դիմումի հիման վրա այն չափով, որքանով դրանց գանձումը սահմանափակվում կամ բացառվում է սույն Համաձայնագրով: Գանձված հարկերի վերադարձման դիմումի ներկայացման ժամկետը չորս տարի է՝ սկսած այն օրացուցային տարվա ավարտից, երբ ստացվել են շահաբաժինները, տոկոսները, ոռոյալթինները կամ եկամտի այլ տեսակները:

3. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն պետք է ապահովի համապատասխան ընթացակարգեր, որպեսզի շահաբաժինների, տոկոսների, ռոյալթիների կամ եկամտի այլ տեսակների վճարումները, որոնք ստացման աղբյուր Պետությունում, սույն Համաձայնագրի համաձայն, ենթակա չեն հարկման կամ ենթակա են նվազեցված հարկման, հնարավոր լինի կատարել առանց նվազեցման կամ միայն համապատասխան հոդվածով սահմանված դրույքաչափով նվազեցումով:

4. Պայմանավորվող պետությունը, որտեղ առաջանում է եկամուտը, կարող է հարկ վճարողից պահանջել մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտության հավաստագիր՝ տրված այդ պետության իրավասու մարմինների կողմից:

5. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են փոխադարձ համաձայնությամբ որոշել սույն հոդվածի կիրարկման կարգը և անհրաժեշտության դեպքում սահմանել սույն Համաձայնագրով սահմանված հարկային նվազեցումների կամ արտոնությունների կիրարկման այլ ընթացակարգեր:

### **Հոդված 28**

#### **ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՏՈՒԿ ԴԵՊՔԵՐՈՒՄ**

Սույն Համաձայնագիրը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը սահմանափակող, երբ վերջինս հարկերից խուսափումը կամ չհարկելը կանխելու նպատակով կիրառում է իր ներքին իրավական դրույթները: Եթե վերոնշյալ դրույթները հանգեցնում են կրկնակի հարկման, իրավասու մարմինները 24-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն պետք է խորհրդակցեն միմյանց հետ՝ խուսափելու կրկնակի հարկումից:

### **Հոդված 29**

#### **ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ**

Սույն Համաձայնագրում ոչինչ չի սահմանափակում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնությունները:

### **Հոդված 30 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Կից Արձանագրությունը սույն Համաձայնագրի անբաժանելի մասն է:

### **Հոդված 31 ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

1. Սույն Համաձայնագիրը պետք է վավերացվի, և վավերագրերը պետք է փոխանակվեն հնարավորինս շուտ:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վավերագրերի փոխանակման օրը և երկու Պայմանավորվող պետություններում գործում է.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո վճարված գումարների համար,

բ) այլ հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրն սկսված կամ դրանից հետո ժամանակահատվածի համար գանձված հարկերի համար,

գ) 26-րդ հոդվածի շրջանակներում հարկերի հավաքման հարցում աջակցության առնչությամբ՝ 24-րդ հոդվածի համաձայն իրավասու մարմինների միջև փոխադարձ համաձայնությունից անմիջապես հետո:

3. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության միջև 1981թ. նոյեմբերի 24-ին կնքված «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը կանխելու մասին» համաձայնագիրը Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերություններում այլևս կիրառելի չէ այն հարկերի նկատմամբ, որոնց համար կիրառելի է սույն Համաձայնագիրը՝ սույն Հոդվածի 2-րդ կետի համաձայն:

**Հոդված 32**  
**ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մնում մինչև Պայմանավորվող պետությունների կողմից դրա գործողության դադարեցումը:


2. Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել Համաձայնագրի գործողությունը՝ դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին գրավոր ծանուցում ուղարկելով սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից 5 տարվա ժամանակահատվածի ավարտից հետո սկսվող օրացուցային որևէ տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ: Այդ դեպքում Համաձայնագրի գործողությունը երկու Պայմանավորվող պետություններում դադարում է.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ դադարեցման վերաբերյալ ծանուցում ստանալու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո վճարված եկամուտների նկատմամբ,

բ) այլ հարկերի առնչությամբ՝ դադարեցման վերաբերյալ ծանուցում ստանալու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո վճարված հարկերի նկատմամբ:

Կատարված է Հոդված 32 քաղաքում 2016 թվականի հունիսի 29-ին, երկու հավասարազոր բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, գերմաներեն և անգլերեն: Հայերեն և գերմաներեն տեքստերի մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԿՈՂՄԻՑ՝**



**ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ**  
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝**



**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ**  
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ**  
**ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**  
**ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ**

Հայաստանի Հանրապետությունը և Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը (Պայմանավորվող պետություններ), ի լրումն Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրի, համաձայնեցին հետևյալ դրույթների շուրջ, որոնք կազմում են Համաձայնագրի անբաժանելի մասը.

1. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերի առնչությամբ.

Պայմանավորվող պետությունները համաձայնում են, որ միջազգային իրավունքը գերակայում է ամեն անգամ, երբ սահմանվում է սույն Համաձայնագրի տարածքային կիրառման շրջանակը:

2. Համաձայնագրի 3-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 21-րդ հոդվածների առնչությամբ.

Համաձայնեցված է, որ «փաստացի կառավարման վայր» տերմինը նշանակում է այն վայրը, որտեղ կայացվում են կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ՝ առանցքային կառավարչական և առևտրային որոշումները: Փաստացի կառավարման վայրը սովորաբար պետք է լինի ամենաբարձրաստիճան անձի կամ անձանց խմբի որոշումների ընդունման վայրը, այն վայրը, որտեղ ամբողջությամբ որոշվում են կազմակերպության կողմից իրականացվող գործողությունները:

3. Համաձայնագրի 7-րդ հոդվածի առնչությամբ.

ա) Երբ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ապրանքներ կամ արտադրանք է վաճառում կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող իր մշտական հաստատության միջոցով, ապա մշտական հաստատության շահույթը

որոշվում է ոչ թե ձեռնարկության կողմից ստացված ընդհանուր գումարի հիման վրա, այլ միայն այն գումարի հիման վրա, որը վերագրելի է այդ մշտական հաստատության փաստացի գործունեությանը՝ այդ վաճառքի կամ ձեռնարկատիրական գործունեության համար:

բ) Պայմանագրերի, մասնավորապես՝ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների կամ հաստատությունների նախագծման, մատակարարման, մոնտաժման կամ կառուցման և կամ հասարակական աշխատանքների դեպքում, երբ ձեռնարկությունն ունի մշտական հաստատություն մյուս Պայմանավորվող պետությունում, այդպիսի մշտական հաստատությանը վերագրվելիք շահույթը կորոշվի ոչ թե պայմանագրի ընդհանուր գումարի հիման վրա, այլ պայմանագրի այն մասի հիման վրա, որը գործնականում իրականացվում է այն Պայմանավորվող պետության մշտական հաստատության կողմից, որտեղ այն գտնվում է: Այդ մշտական հաստատության՝ ապրանքների մատակարարումից ստացված շահույթները կամ պայմանագրի մաս կազմող շահույթները, որոնք առաջացել են այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

գ) Այն վճարները, որոնք ստացվել են տեխնիկական ծառայությունների, այդ թվում՝ գիտական ուսումնասիրությունների կամ հետազոտությունների, երկրաբանական կամ տեխնիկական բնույթի ուսումնասիրությունների կամ ինժեներական պայմանագրերի, այդ թվում՝ դրանց հետ կապված լուսապատճենահանման կամ խորհրդատվության կամ վերահսկողական ծառայությունների մատուցումից, պետք է համարվեն վճարումներ, որոնց նկատմամբ կիրառվում է Համաձայնագրի 7-րդ հոդվածը:

#### 4. Համաձայնագրի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի առնչությամբ.

Համաձայնեցված է, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետության պարագայում կիրառվում են հետևյալ դրույթները.

ա) Համաձայնագրի 10-րդ հոդվածում օգտագործվող «շահաբաժիններ» տերմինը ներառում է նաև ներդրումային հիմնադրամի հավաստագրերի հիման վրա իրականացված բաշխումը: Սույն Համաձայնագրի նպատակներով «ներդրումային հիմնադրամ» տերմինը նշանակում է Հարկային ակտով (Investmentsteuergesetz) սահմանված ներդրումային հիմնադրամ:

բ) Չնայած Համաձայնագրի 10-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթներին՝ հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը,

(i) քանի դեռ ներդրումային հիմնադրամի հավաստագրերի հիման վրա իրականացված բաշխումն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում է Համաձայնագրի 6-րդ հոդվածում սահմանված անշարժ գույքից ստացված եկամուտներին,

(ii) եթե բաշխող ընկերությունն անշարժ գույքի ներդրումային ընկերություն է, որի շահույթներն ամբողջովին կամ մասամբ ազատված են հարկումից, կամ որը կարող է շահույթի որոշման ժամանակ նվազեցնել բաշխված շահաբաժինները: Անշարժ գույքի ներդրումային ընկերությունը «Գերմանական անշարժ գույքի ֆոնդային կորպորացիաների մասին» գերմանական օրենքի (REIT Act; *Gesetz über deutsche Immobilien-Aktiengesellschaften mit börsennotierten Anteilen*) 1-ին գլխի 1-ին ենթագլխի համաձայն ցուցակագրված բաժնետոմսերով ընկերություն է:

գ) Չնայած Համաձայնագրի 10-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի դրույթներին՝ Համաձայնագրի 10-րդ հոդվածի 2-րդ կետի «բ(i)» ենթակետում նշված եկամտից տարբերվող որևէ այլ եկամտի առնչությամբ ներդրումային հիմնադրամի հավաստագրերի հիման վրա իրականացված բաշխման նկատմամբ կիրառվում են միայն «բ» ենթակետի դրույթները:

##### 5. Համաձայնագրի 11-րդ հոդվածի 2-րդ կետի առնչությամբ.

Համաձայնեցված է, որ եթե Հայաստանի և ներկայումս (սույն Համաձայնագրի ստորագրման օրվա դրությամբ) Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ պետություններից որևէ մեկի հետ սույն Համաձայնագրի ստորագրումից հետո ստորագրված որևէ այլ համաձայնագրով նախատեսվում է, որ Հայաստանում առաջացող տոկոսները Հայաստանում չեն հարկվի կամ կհարկվեն ավելի ցածր դրույքաչափով, քան կիրառվում են սույն Համաձայնագրով, ապա այդպես չհարկելը կամ ցածր դրույքաչափով հարկելը ինքնաբերաբար կկիրառվեն սույն Համաձայնագրի դրույթներով կարգավորվող տոկոսների նկատմամբ: Համաձայնեցված է նաև, որ այդ դեպքում Հայաստանի իրավասու մարմինը անհապաղ կտեղեկացնի Գերմանիայի Դաշնային Հանրապետության իրավասու մարմնին, որ սույն կետի կիրառման պայմաններ են առաջացել:

6. Համաձայնագրի 11-րդ հոդվածի 3-րդ կետի առնչությամբ.

Համաձայնեցված է, որ Համաձայնագրի 11-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները կկիրառվեն նաև Հայաստանի Հանրապետության Կառավարությանն ամբողջությամբ պատկանող այլ ֆինանսական հաստատությունների նկատմամբ, որոնք կորոշվեն Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների փոխադարձ համաձայնությամբ:

7. Համաձայնագրի 11-րդ հոդվածի 4-րդ կետի առնչությամբ.

Համաձայնեցված է, որ «տոկոս» տերմինը չի ներառում Համաձայնագրի 10-րդ հոդվածով սահմանված այնպիսի եկամուտները, ինչպիսիք, օրինակ, գերմանական ներդրումային հիմնադրամի հավաստագրերի հիման վրա իրականացված բաշխումներն են:

8. Համաձայնագրի 10-րդ և 11-րդ հոդվածների առնչությամբ.

Անկախ Համաձայնագրի 10-րդ և 11-րդ հոդվածների դրույթներից՝ շահաբաժինները և տոկոսը կարող են հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են, այդ Պետության օրենքների համաձայն, եթե դրանք

ա) ստացվում են այն իրավունքներից կամ պարտքի պահանջից, որոնք իրավունք են տալիս մասնակցություն ունենալու շահույթում, այդ թվում՝ պասսիվ գործընկերոջ (stiller Gesellschafter) մասնակցությունից ստացված եկամուտում կամ այնպիսի տոկոսային դրույքաչափ ունեցող վարկերից ստացված եկամուտում, որոնք կապված են վարկառուի շահույթի (partiarische Darlehen) կամ պարտատոմսերի բաշխումից ստացված շահույթի (Gewinnobligationen) հետ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության հարկային օրենքի իմաստով, և

բ) նվազեցման ենթակա են այդպիսի շահաբաժինների կամ տոկոսի գծով պարտապանի շահույթի որոշման ժամանակ:

9. Համաձայնագրի 22-րդ հոդվածի 2-րդ կետի «ե(ii) ենթակետի առնչությամբ.

Համաձայնեցված է, որ եկամտի կամ գույքի տեսակները կամ դրանց տարրերը փաստացի հարկվում են, երբ դրանք ընդգրկված են հարկման

բազայում, որի նկատմամբ հաշվարկվում է հարկը: Դրանք փաստացի չեն հարկվում, եթե դրանք հարկման ենթակա չեն կամ ազատված են հարկումից:

10. Համաձայնագրի 23-րդ հոդվածի 5-րդ կետի առնչությամբ.

Համաձայնեցված է, որ Համաձայնագրի 23-րդ հոդվածի 5-րդ կետը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ թույլատրել ձեռնարկությունների միջև կատարել եկամտի կամ համանման այլ օգուտների միջսահմանային համախմբում:

11. Համաձայնագրի 25-րդ հոդվածի առնչությամբ.

Եթե, Համաձայնագրի 25-րդ հոդվածի համաձայն, կատարվել է անհատական տվյալների փոխանակում, ապա պետք է կիրառվեն հետևյալ լրացուցիչ դրույթները՝ յուրաքանչյուր Պայմանավորվող պետության ներքին օրենքների համաձայն.

ա) Ստացող գործակալությունը կարող է օգտագործել տվյալները՝ Համաձայնագրի 25-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ միայն տրամադրող գործակալության սահմանած նպատակով՝ հաշվի առնելով տրամադրող գործակալության սահմանած և Համաձայնագրի 25-րդ հոդվածին համապատասխանող պայմանները:

բ) Համաձայն Համաձայնագրի 25-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ նախադասության՝ տեղեկատվությունը կարող է առանց տրամադրող Պետության հետ նախապես համաձայնեցման այլ նպատակների համար օգտագործվել միայն այն դեպքում, եթե դա անհրաժեշտ է յուրաքանչյուր առանձին դեպքում մարդու կյանքին, մարմնական անխաթարությանը կամ անձի ազատությանը սպառնացող վտանգի դեպքում կամ նշանակալի գույքի պաշտպանության համար, և եթե առկա է ուշացումից բխող որևէ վտանգ: Նման դեպքում անհապաղ պետք է դիմել տեղեկատվություն տրամադրող Պետության իրավասու մարմնին՝ օգտագործման նպատակի փոփոխությունը հետադարձ կարգով թույլատրելու միջնորդությամբ: Եթե թույլտվությունը մերժվում է, ապա տեղեկատվությունն այլևս չի կարող օգտագործվել այլ նպատակների համար: Տեղեկատվության օգտագործման կարգի փոփոխության արդյունքում ծագած վնասները ենթակա են փոխհատուցման:

գ) Տեղեկատվություն տրամադրող գործակալությունը պարտավոր է զգոնություն դրսևորել տրամադրվող տվյալների ճշտության և դրանց՝ Համաձայնագրի 25-րդ հոդվածի 1-ին կետի առումով ենթադրվող կարևորության և տրամադրման նպատակի հետ համապատասխանության հարցում: Տվյալները ենթադրաբար կարևոր են, եթե կոնկրետ դեպքում մեծ է հավանականությունը, որ մյուս Պայմանավորվող պետությունն ունի հարկելու իրավունք, և չկա որևէ փաստ, որը կմատնանշի, որ տվյալները արդեն հայտնի են մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմին, կամ որ մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմինը կարող էր իմանալ հարկման օբյեկտի մասին առանց այդ տեղեկատվության: Եթե պարզվում է, որ տրամադրվել են չճշտված կամ այնպիսի տվյալներ, որոնք չպետք է տրամադրվեին, ապա ստացող գործակալությունն անհապաղ պետք է տեղեկացվի այդ մասին: Ստացող գործակալությունը պարտավոր է անհապաղ ճշտել կամ ջնջել այդպիսի տվյալները:

դ) Տեղեկատվություն ստացող գործակալությունը հարցման դեպքում պետք է տեղեկատվություն տրամադրող գործակալությանը տեղեկացնի յուրաքանչյուր դեպքի համար տրամադրված տվյալների օգտագործման և դրա արդյունքների մասին:

ե) Տեղեկատվություն ստացող գործակալությունը պետք է տեղեկացնի այն անձին, ում վերաբերում է տեղեկատվություն տրամադրող գործակալության կողմից տվյալների հավաքումը: Շահագրգիռ անձին տեղեկացնելու կարիք չկա, քանի դեռ համարվում է, որ նրան չտեղեկացնելու հասարակական շահը գերակայում է նրա տեղեկացված լինելու իրավունքի նկատմամբ:

զ) Կիրառման ընթացքում շահագրգիռ անձը պետք է տեղեկացված լինի իրեն վերաբերող տրամադրված տվյալների և դրանց օգտագործման վերաբերյալ: «Ե» ենթակետի երկրորդ նախադասությունը կկիրառվի համապատասխանաբար:

է) Ստացող գործակալությունն իր ներպետական օրենքների համաձայն պատասխանատվություն է կրում բոլոր այն անձանց համար, ովքեր տուժել են սույն Համաձայնագրի համաձայն տվյալների փոխանակման անօրինական տրամադրման հետևանքով: Ստացող գործակալությունը չի կարող խուսափել տուժած անձի հետ կապված ծախսերի փոխհատուցումից՝ պատճառաբանելով, որ վնասը պատճառել է տրամադրող գործակալությունը:

ը) Տրամադրող և ստացող գործակալությունները պարտավոր են վարել անհատական տվյալների տրամադրման և ստացման պաշտոնական գրառումներ:

թ) Եթե տրամադրող գործակալության ազգային օրենքը պարունակում է տրամադրված անհատական տվյալները վերացնելու հատուկ վերջնաժամկետ , այդ գործակալությունը պետք է համապատասխանաբար տեղեկացնի ստացող գործակալությանը: Ամեն դեպքում տրամադրված անհատական տվյալները ոչնչացվում են, երբ այլևս անհրաժեշտ չեն այն նպատակի համար, ինչի համար տրամադրվել էին:

ժ) Տրամադրող և ստացող գործակալությունները պարտավոր են արդյունավետ միջոցներ ձեռնարկել տրամադրված անհատական տվյալները չթույլատրված օգտագործումից, չթույլատրված փոփոխություններից և չթույլատրված հրապարակումից պաշտպանելու համար:

Կատարված է Յոթերորդ քաղաքում 2016 թվականի հունիսի 29-ին, երկու հավասարազոր բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, գերմաներեն և անգլերեն: Հայերեն և գերմաներեն տեքստերի մեկնաբանման ժամանակ ի հայտ եկած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ՝



ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

